ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի հունվարի **1-ից** ուժի մեջ են մտնում **2020**թ. փետրվարի **13**-ին ընդունված **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին»** օրենքի մի շարք կարևոր դրույթներ:

Օրենքի մյուս կարևոր հոդվածները, մասնավորապես, հանրային սննդի օբյեկտներում ծխախոտային արտադրատեսակների և փոխարինիչների օգտագործման արգելքն ուժի մեջ է մտնում **2022**թ. մարտի **15**-ից:

ԱԺ պաշտոնական կայքի նախագծեր բաժնում տեղադրվել է սույն օրենքի 2021թ. հունվարի 1-ից ուժի մտնող դրույթների հետաձգման վերաբերյալ նախագիծ:

Այս առթիվ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն իր տարակուսանքն է հայտնել.

«Մեր երկրի համար այս ծանր ժամանակաշրջանում ծխախոտային արդյունաբերության մի շատ հայտնի միջազգային արտադրող հանդգնում է շանտաժի ենթարկել թեկուզ թուլացած, բայց մի ամբողջ պետության: Ինձ համար զարմանալի է, երբ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահը կարող է համահեղինակ լինել առողջության քայքայմանը նպաստող օրինագծի: Իսկ շանտաժը կարծես աշխատել է: Հակառակ պարագայում հարցը ԱԺ օրակարգ չէր հասնի, քանի որ բազմիցս ապացուցվել է, որ այդ դրույթները շատ կարևոր են ավելի առողջ դեռահասներ ու պատանիներ և, ընդհանրապես, ավելի առողջ բնակչություն ունենալու համար»:

Նշենք, որ օրենքն ընդունելիս համակողմանիորեն քննարկվել են դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետները և, հաշվի առնելով ԱԺ պատգամավորների առաջարկները, որոշվել է այնպես խմբագրել օրենքը, որպեսզի դրա դրույթներն ուժի մեջ մտնեն աստիճանաբար՝ ժամանակ տալով հանրությանը և տնտեսվարողներին պատրաստվել դրան: Եվ անհասկանալի է այս հարցը կրկին ԱԺ օրակարգ բերելը, երբ երկիրը կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առջև, որոնք հանգուցալուծում կամ դիմագրավում են պահանջում պետական կառավարման բոլոր համակարգերում:

Հանձնաժողովի նիստի ժամանակ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը կրկին ներկայացրել է Կառավարության տեսակետը, որ օրենքի նշված դրույթների հետաձգումն էլ ավելի կվատացնի առկա վատթար վիճակը՝ շարունակաբար վտանգելով մեր հապարավոր քաղաքացիների առողջությունն ու կյանքը և, որ օրենքի դրույթների կիրառումը շատ կարևոր է: Դրանց կիրառման ժամկետներն արդեն իսկ հետաձգվել էին հենց հանձնաժողովի առաջարկով օրենքն ընդունելու պահին:

Բազմիցս ներկայացվել են ապացուցողական փաստեր, որ օրենքով սահմանված դրույթները ոչ միայն նպաստելու են երկրի զարգացմանը, այլև հնարավորություն են ընձեռելու նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարին, նաև տարբեր համավարակների դեպքում (ինչպիսին է կորոնավիրուսը) այս հիվանդությամբ ապրող անձանց շրջանում ծանր հիվանդացության դեպքերի և մահերի կանխմանը:

Սույն օրենքը միտված է ավելի առողջ սերունդ ունենալուն, ինչն ախուսափելիորեն ավելի է ուժեղացնելու մեր երկրի տնտեսությունը և ընդհանուր դիմադրողականությունը:

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ 2020

«Ոչ վարակիչ հիվանդությունները Հայաստանում. STEPS տվյալների գենդերային վերլուծություն» զեկույցը

2019-2020թթ-ին տարածքային առողջապահության մասնագետներն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) փորձագետների հետ համատեղ առաջին անգամ իրականացրել են բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածության խորը ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում վեր են հանվել առկա խնդիրները, վերլուծվել են STEPS հետազոտության արդյունքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով սեռատարիքային խմբերին, բարեկեցությանը, կրթության մակարդակին:

Համագործակցության արդյունքում համատեղ մշակվել է «Ոչ վարակիչ հիվանդությունները Հայաստանում. STEPS տվյալների գենդերային վերլուծություն» զեկույցը, որը ներկայացվել է 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ԱՀԿ-ի կողմից կազմակերպված վեբինարին: Այն հրապարակվել է նաև ԱՀԿ-ի պաշտոնական կայքում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ (ԱԱՀ)

Զեկույցն ամփոփում է 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ֆինանսական հոսքերի մասին տեղեկատվությունը, որը ներառում է պետական և մասնավոր հատվածներից, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցներից ստացված ֆինանսավորման մասին հավաքագրված տվյալները, միաժամանակ, միջոցների բաշխման հիմնական ուղղությունները (գործառույթները) և դրանք տնօրինող մարմինների (ֆինանսական գործակալների) դերն այդ հոսքերում:

Սույն զեկույցը նախատեսված է առողջապահական համակարգի կազմակերպիչների, առողջապահության ոլորտի փորձագետների, առողջապահական համակարգի հարցերով զբաղվող և հետաքրքրվող այլ մասնագետների համար:

ԳԵՐԴՈՋԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցն առաջին աշխատությունն է Հայաստանում, որը նպատակ է հետապնդում բարձրացնել գործող իրավական կառուցակարգերի և հանրության իրազեկման աստիճանը, որոնք կարող են օգտագործվել ԹՆՕ հանրույթի շրջանում թմրամիջոցների օգտագործումից առաջացող մահերը կանխելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային փորձի լավագույն օրինակները՝ որդեգրել ազգային ռազմավարություն ու միջոցառումներ և պատշաճ կիրառում ստանալու դեպքում՝ ապահովել թմրամիջոցներից մահացության դեպքերը կանխարգելելու դրական ցուցանիշներ:

ՄՇԱԿՎԵԼ ԵՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, բնակչության շրջանում COVID-19-ի, թոքաբորբերի տարածվածության հրատապ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել և հաստատվել են **«Գրիպով և թոքաբորբով (J09-J18) պացիենտների հաշվառում»** Ձև դ 10 և **«Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID (ԿՈՎԻԴ)-19 պացիենտների հաշվառում»** Ձև դ 19 ամսական վարչական վիճակագրական հաշվետվության ձևերը:

Հաշվետվության նոր ձևերի ճիշտ լրացումն ու ներկայացումն ապահովելու նպատակով, ս.թ. դեկտեմբերի 14-ից 18-ը Առողջապահության ազգային ինստիտուտի Տեղեկատվական վերլուծական ազգային կենտրոնի կողմից կազմակերպվեցին և իրականացվեցին հեռավար դասընթացներ մարզերի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մասնագետների (վարակաբանների, ընտանեկան բժիշկների, վիճակագիրների) համար:

Դասընթացներին ներկայացվեցին հաշվետվության ձևերի լրացման կարգերը, դրանց էլեկտրոնային ձևաչափով հանձնման, ընդունման ընթացակարգը:

COVID-19

ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



COVID-19-Ի ՆՄՈՒՇԱՌՈՒՄ

Առողջապահության ազգային ինստիտուտում շարունակվում է ՀՀ բժշկական տարբեր հաստատությունների բուժաշխատողների համար նոր կորոնավիրուսի (COVID-19) նմուշառման տեխնիկային ուղղված **«COVID 19-ի նմուշառում»** դասընթացը: Դասընթացի ընթացքում բուժաշխատողներին ծանոթացնում են նմուշառման նոր տեխնիկայի հմտություններին, պարզաբանվում են հարցեր:

Շարունակական դասընթացի նպատակն է բուժաշխատողների նոր կորոնավիրուսային վարակի նմուշառման տեխնիկայի մասնագիտական պատրաստվածության բարձրացումը:

ՊԱՏՎԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Առողջապահության ազգային ինստիտուտի աշխատակիցները ևս միացան **«Պատվաստվում են բուժաշխատողները»** նախաձեռնությանը՝ ստանալով կանխարգելիչ պատվաստում սեզոնային գրիպի դեմ՝ գիտակցելով վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում պատվաստումների նշանակությունը:

Այս տարի սեզոնային գրիպի դեմ պատվաստումն ավելի կարևոր է, քան երբևէ: Բուժաշխատողների շրջանում սեզոնային գրիպի դեմ պատվաստումը կնվազեցնի ինչպես հիվանդներին, այնպես էլ ընտանիքի անդամներին վարակելու վտանգը: Համավարակի և պատվաստանյութի առկայության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել պատվաստումների համար առաջնային դասել թիրախային խմբերը: Թիրախային խմբեր են համարվում բուժաշխատողներն ու 65-ից բարձր տարիքի մարդիկ: Գրիպը կարող է ծանր ընթանալ նրանց մոտ, ովքեր ունեն քրոնիկական հիվանդություններ և ուղեկցող առողջական խնդիրներ, ինչպիսիք են շաքարային դիաբետը, ասթման և սրտի հիվանդությունները:

Պատվաստումը կանխարգելում է հիվանդությունը:

ԱԱԻ
Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

COVID-19
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
Դեկտեմբերի **28-ի** դրությամբ

114 ՆՈՐ ԴԵՊՔ | **7** ՆՈՐ ՄԱՀ | **157948** ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

585057 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ | **14824** ԲՈՒԺՎՈՂ ԱՆՁ

139675 ԱՊԱՔԻՆՎԱԾ ԱՆՁ | **2775** ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԵՐԻ ԹԻՎԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
Լուսինե Հովհաննիսյան
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**